# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
# ՀԱՑԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

22.01.2020 թիվ 1

*ՀՀ Արագածոտնի մարզպետ*
*Պարոն Դ. ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ*

Հարգելի պարոն Գևորգյան

Ձեզ ենք ներկայացնում Հացաշեն համայնքի ավագանու թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5, թիվ 6 որոշումները:

Հացաշեն համայնքի ղեկավար՝ Վ. Դավթյան

Ելք
ՀՀ Արագածոտնի մարզպետարանի
աշխատակազմի [illegible]
թյան [illegible] բաժին
«22» 01 2020թ.
Մուտք № 00485-20

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտն մարզի գ. Հացաշեն
Հեռ. 099-92-64-17
e-mail - hatsashen.aragatsotn@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«20» Հունվար 2020թ. N 4

## ՀԱՑԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԻ ԱՄՍԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով Հացաշեն համայնքի ավագանին որոշում է.

Հացաշեն համայնքի ղեկավարի 2020 թվականի աշխատավարձի ամսական դրույքաչափը սահմանել 160000 (հարյուր վաթսուն հազար) դրամ:

Ավագանիներ Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ա. ԹԱՄՈՅԱՆ

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա. ՂԱԶԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Վ. ԴԱՎԹՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Արագածոտն մարզի գ. Հացաշեն
Հեռ. 093-92-64-17
e-mail - hatsashen.aragatsotn@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

«20» հունվար 2020թ. N 1

## 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթներով, համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հացաշեն համայնքի ավագանու 20.01.2020թվականի թիվ 1 նիստի օրակարգը հետևյալ տեսքով՝

1. Հացաշեն համայնքի ղեկավարի կողմից Հացաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի ընթացքի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:
2. Հացաշեն համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը սահմանելու մասին:
3. Հացաշեն համայնքի ղեկավարի աշխատավարձի ամսական դրույքաչափը հաստատելու մասին:
4. Հացաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:
5. Հաստատել Հացաշեն համայնքի 2020 թվականի բյուջեն:

Ավագանիներ Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ա. ԹԱՄՈՅԱՆ

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Վ. ԴԱՎԹՅԱՆ/

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտն մարզի գ. Հացաշեն
Հեռ. 099926417
e-mail - hatsashen.aragatsotn@mta.gov.am

## ՈՐՈՇՈՒՄ

« 20» Հունվար 2020թ. N 2

## ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ IV ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 1-ին մասի, 1-ին կետով, ինչպես նաև «Բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով ՝ ***համայնքի ավագանին որոշում է***

Հաստատել Հացաշեն համայնքի ղեկավարի կողմից Հացաշեն համայնքի 2019 թվականի բյուջեի չորրորդ եռամսյակի ընթացքի հաղորդումը՝ համաձայն հավելվածի:

Ավագանիներ Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ա. ԹԱՄՈՅԱՆ

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Վ. ԴԱՎԹՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՀԱՅԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտն մարզի գ. Հացաշեն
Հեռ. 099 92 64 17
e-mail - hatsashen.aragatsotn@mta.gov.am


# ՈՐՈՇՈՒՄ

«20» Հունվարի 2020թ. N 3

## ՀԱՅԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ, 19-րդ և 20-րդ կետերով և հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածը Հացաշեն համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել և հաստատել Հացաշեն համայնքում 2020 թվականի տեղական տուրքերի և տեղական վճարների դրույքաչափերը համաձայն հավելվածի:

Ավագանիներ Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ա. ԹԱՄՈՅԱՆ

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Վ. ԴԱՎԹՅԱՆ/

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի
Հացաշեն համայնքիԱվագանու
2020 թվականի հունվարի 20-ի
թիվ 3 որոշման

## Հացաշեն համայնքի 2020թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը

| | | |
|---|---|---|
| Համայնքի տարածքում | | |
| 1 | Ոգելից եւ ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| | *մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանել* | 2500 /երկու հազար հինգ հարյուր/դրամ |
| 2 | Ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ | |
| | *մինչեւ 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական եւ ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում տեղական տուրքը սահմանել 2000 /երկու հազար/ դրամ,* | 2000 /երկու հազար/դրամ |
| 3 | Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար | |
| | ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ | |

| | | |
|---|---|---|
| ա | *մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝* | 7500/յոթ հազար հինգ հարյուր/դրամ |
| | սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝ | |
| | *ա) 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝.* | 15000/տասնհինգ հազար/դրամ |
| | *ՈՉ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԵՆՔԵՐԻ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝* | |
| | *ա) մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝* | 1500/մեկ հազար հինգ հարյուր/դրամ |
| | 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ | 2500/երկու հազար հինգ հարյուր/դրամ |
| 4 | Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվություն համար տեղական տուրքը սահմանել՝ . | 1500/մեկ հազար հինգ հարյուր/դրամ |
| 5 | Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում անհրաժեշտ չափագրական և այլ նման աշխատանքների համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար | 1000/մեկ հազար/դրամ |
| 6 | Համայնքում մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից գանձել | 2000 /երկու հազար/դրամ |
| 7 | Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճենների և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել | 1000/ մեկ հազար/դրամ |

ՀԱՅԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Վ. ԴԱՎԹՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտն մարզի գ. Հացաշեն
Հեռ. 099-92-64-17
e-mail - hatsashen.aragatsotn@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

« 20 » հունվար 2020թ. N 5

### ՀԱՑԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով, «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածով Հացաշեն համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հացաշենի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելվածի։

Ավագանիներ Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ա. ԹԱՄՈՅԱՆ

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Վ. ԴԱՎԹՅԱՆ/

Հավելված
ՀՀ Արագածոտնի մարզի
Հացաշեն համայնքի ավագանու
2020 թվականի հունվարի 20-ի
N 5 ՈՐՈՇՄԱՆ

## ՀԱՑԱՇԵՆԻ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ. ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 7

2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրուքյաչափերը 5.5

| ՀՀ | ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ /ՀՀԴՐԱՄՈՎ/ | Ամսական վճար | Նպատակային սոց վճար վճրողներ |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 160000 | 160000 | 1977թ |
| | Համայնքային ծառայողներ | | | | |
| 2 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 110000 | 110000 | 1967թ |
| 3 | Առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 95000 | 95000 | |
| 4 | Առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 95000 | 95000 | 1975թ |
| | Մշակույթի տուն | | | | |
| 5 | Մշակույթի տան տնօրեն | 0.5 | 95000 | 47500 | |
| 6 | Գեղմասվար | 0.5 | 95000 | 47500 | 1981թ |
| | Սպասարկող անձնակազմ | | | | |
| 7 | Հավաքարար | 0.5 | 95000 | 47500 | |
| | ԸՆԴԱՄԵՆԸ | 5.5 | x | 602500 | |

Ա. ԹԱՄՈՅԱՆ

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Վ. ԴԱՎԹՅԱՆ/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆ ՄԱՐԶԻ ՀԱՑԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտն մարզի գ. Հացաշեն
Հեռ. 099-92-67-17
e-mail - hatsashen.aragatsotn@mta.gov.am

# ՈՐՈՇՈՒՄ

20 հունվար 2020 N 6

## ՀԱՑԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի պահանջներով և «Բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածով **Հացաշեն համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Հացաշեն համայնքի 2020 թվականի բյուջեն։

Ավագանիներ Կողմ - 3 Դեմ - 0 Ձեռնպահ - 0

Ա. ԹԱՄՈՅԱՆ

Մ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Ա. ՄԽԻԹԱՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ /Վ. ԴԱՎԹՅԱՆ/